



Յունվար-փետրվար ամիսների լրափուլ

Կենդանիները՝ առուծախից դուրս. նոր քաղաքականությունը տալիս է իր պտուղները



Հունվարին Երևանի կենդանաբանական այգու գիշատիչների բաժնում միանգամից երկու նորեկի դիմավորեցին. լուսան ու եղեգնակատուն զուգընկերներ ունեցան: Անդրկովկասյան արու լուսանը (*Lynx lynx dinnicki*) Սյունիքի, իսկ մյուս նորեկը՝ էգ եղեգնակատուն (*Felis chaus*) Արմավիրի մարզից, այգի տեղափոխվեցին մասնավոր կենդանաբանական այգիներից:

Կենդանիների տեղափոխությունը նոր նախաձեռնած ծրագրի մի մասն է, որը նպատակ ունի Հարավային Կովկասի բնորոշ կենդանատեսակները անհատների կողմից պահվող տարածքներից տեղափոխել Երևանի կենդանաբանական այգի:

Այս պարագայում անգամ այգին կենդանուն չի գնում: Սա ուղղորդված վարքագիծ է, որը կոչված է կանխելու գումարի անկախիթով վայրի բնության մեջ կենդանիներ բռնելու փորձերը:

«Կենդանիներն առուծախի առարկա չպիտի դառնան, և մենք խստորեն հետևում ենք այդ կանոնակարգին», - ասում է Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը:

Երևանի կենդանաբանական այգի-անհատական կենդանաբանական այգիների համագործակցության այս ձևաչափը հիմնականում նպատակ ունի հնարավոր բոլոր դեպքերում անազատության մեջ գտնվող վայրի կենդանիների համար ավելի բարենպաստ պայմաններ ապահովել:

Ավելին՝ դառնալով այդ կենդանատեսակների հավաքատեղի, այգին իրականություն է դարձնում նոր տնօրինության որոշումը քաղաքականությունը, այն է՝ առաջիկայում կենդանիների ցուցադրման և բազմացման հարցում հիմնական շեշտը դնել տարածաշրջանին բնորոշ կենդանատեսակների վրա՝ առանձնացնելով հատկապես վտանգված տեսակները:

Սա նաև մի քայլ է դեպի Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) անդամակցություն, որին Երևանի կենդանաբանական այգին անցյալ տարի նոյեմբերին հայտ է ներկայացրել:

1992 թվականին հիմնադրված Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիան տարածաշրջանում խոշորագույններից մեկն է: 2011 թվականի տվյալների համաձայն՝ ասոցիացիան իր կազմում միավորում է 41 երկրներում գտնվող 340 կենդանաբանական այգիներ:

«Մեր հայտը Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիա ներկայումս քննարկման փուլում է, և մենք ակնկալում ենք, որ շուտով կկարողանանք անդամակցել ասոցիացիային», - ասում է Ռուբեն Խաչատրյանը:

EAZA-ին անդամակցելը հնարավորություն կտա տարբեր կենդանիներ ձեռք բերել, որոնց համար կապահովվեն պահանջվող հատուկ պայմաններ:



Խնամք և կրթություն. Երևանի կենդանաբանական այգին և «Կոկա-կոլա» ընկերությունը կհամագործակցեն



Երևանի կենդանաբանական այգու արջերը թեև «Կոկա-կոլայի» համին ծանոթ չեն, սակայն ձմռան խոր «քնից» արթնանալուց հետո լավ անակնկալ ունեն ընկերության կողմից:

Արձագանքելով անցյալ տարի այգում մեկնարկած և մեծ հետաքրքրություն արթնացրած «Կենդանիների խնամակալություն» ծրագրին՝ «Կոկա-կոլա Հելլենիկ բրոքինգ քամփին Արմենիա» ՓԲԸ-ն Անդրկովկասյան գործարքի խնամակալության ցանկություն հայտնեց:

Առաջիկա մեկ տարվա ընթացքում, ստանձնելով այգու նորածին արջուկի և նրա մոր խնամակալությունը, ընկերությունը կմասնակցի կենդանիների բարեկեցությանն ու խնամքին ուղղված միջոցառումներին:

2011-ի մայիսին մեկնարկած «Կենդանիների խնամակալություն» ծրագրին սա առաջին կորպորատիվ հայտն է: Այսօր այգու 35 կենդանիներն արդեն իսկ խնամակալներ ունեն:

Սակայն այգու և ընկերության համագործակցությունը խնամակալությամբ չի սահմանափակվում:

Մի այլ նախաձեռնությամբ, «Կոկա-կոլա Հելլենիկ բրոքինգ քամփին Արմենիա» ՓԲԸ-ի աջակցությամբ, Երևանի կենդանաբանական այգու կրթական կենտրոնում նախատեսվում է ստեղծել էկոպարկ, ուր կկազմակերպվեն վայրի բնությանն ու բնապահպանությանը նվիրված դասընթացներ:

Նպատակը՝ շրջակա միջավայրի հանդեպ հոգատար, բանիմաց սերունդ դաստիարակելն է: Դասընթացներից բացի, էկոպարկի սաները կմասնակցեն թեմատիկ մի շարք միջոցառումներին, որոնք կամրապնդեն ստացած գիտելիքներն ու հնարավորություն կընձեռեն կիրառել դրանք գործնականում:

Նախատեսվում է ծրագրի շրջանակներում հատուկ ուշադրության արժանացնել սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող երեխաներին: Պարբերաբար դասընթացներ կկազմակերպվեն մանկատների, գիշերօթիկ և հատուկ դպրոցների սաների համար:

Էկոպարկի անդամ կարող են դառնալ հանրակրթական, գիշերօթիկ և հատուկ դպրոցներում սովորող 10-15 տարեկան պատանիներ:

«Նորաստեղծ կրթական կենտրոնի համար այս ձևաչափով էկոպարկի ստեղծումը պատանիների հետ աշխատելու առաջին քայլն է միայն», - ասում է կենդանաբանական այգու կրթական կենտրոնի ծրագրերի համակարգող Հռիփսիմե Խաչատրյանը. - Ժամանակի ընթացքում էկոպարկը կվերածվի այգու ձևաչափի դպրոցի»:



ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Նոր մոտեցում. ձմեռը կենդանիների համար հարմարավետ և ջերմ կլիմա



Երևանի կենդանաբանական այգում նախատեսվող այլընտրանքային էներգիա ստանալու նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրերը և արդեն իսկ մեկնարկած գազֆիկացման աշխատանքները հուսադրում են, որ գալիք տարվա ձմեռը կենդանիների համար անհամեմատ հարմարավետ և ջերմ կլիմա:

«Այգին ջեռուցվում է էլեկտրաէներգիայով, ինչը ոչ միայն թանկ է, այլև ոչ նպատակահարմար կենդանիների առողջության տեսանկյունից», - ասում է կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը:

Տարսկզբին արդեն իսկ ավարտին են հասցվել ավելի քան 1 կմ երկարությամբ գազի խողովակների մոնտաժման աշխատանքները: Այգուն օգնել է Երևանի նորանշանակ քաղաքապետ Տարոն Մարգարյանը՝ քաղաքապետարանի աջակցությամբ համաֆինանսավորելով կարևոր այս նախաձեռնությունը:

Ըստ հաշվարկների՝ այգու ողջ տարածքի գազֆիկացումը ոչ միայն կմեղմի ձմռան ցուրտը, այլև գրեթե կրկնակի կնվազեցնի մինչ այս ջեռուցման համար ծախսվող ամսական 3 միլիոն դրամը: Այգու գազֆիկացումն ընդհանուր առմամբ արժեցել է 10 միլիոն դրամ:

Մեկ այլ համագործակցությամբ՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շնորհիվ, այս տարի արդեն ջեռուցվում է խոշոր կառավարչիների համար նախատեսված նոր ազատավանդակի ձմեռանոցը: Ներկայումս բանակցություններ են տարվում «Գրանդ Քենդի» ընկերության հետ՝ փոխ ձմեռանոցի ջեռուցման հարցի շուրջ:

Տնօրեն Ռուբեն Խաչատրյանը հավաստում է, որ առաջիկա մեկ տարվա ընթացքում ներդրվող մի շարք ծրագրերի շնորհիվ փորձ է արվելու կենդանաբանական այգում կենսավառելիքի, փոքրիկ հիդրոկայանների կառուցման և արևային էներգիայի շնորհիվ «անկախ էլեկտրաէներգիա արտադրել»:

«Մեր ծրագրերը, բացի բնապահպանական լինելուց, նաև կրթական միտում ունեն: Եվ մենք փորձելու ենք ցույց տալ, որ 40 հա տարածք ունեցող կենդանաբանական այգին նաև կարող է անկախ, կայուն աշխատել», - ասում է Ռուբեն Խաչատրյանը:

2011. փոփոխությունների տարի Երևանի կենդանաբանական այգում



2011 թվականը իրոք բեկումնային էր Երևանի կենդանաբանական այգու համար: Անցյալ տարվա ապրիլին այգու տնօրենի պաշտոնը ստանձնելուց գրեթե մեկ տարի անց եկել է ժամանակը՝ ամփոփելու կատարած արդյունքներն և խոսելու ձեռքբերումների և բարեփոխումների մասին:

Առավել ակնառու հաջողություններից մեկը թերևս կենդանաբանական այգու այցելուների թվի անսխալեպ աճն էր: Եթե 2009-ին կենդանաբանական այգու այցելուների թիվը 135.000 էր, 2010-ին՝ 92.793, ապա անցյալ տարի այդ թիվն ավելացավ շուրջ երեքուկես անգամ՝ հասնելով 316.153-ի:

Նման հետաքրքրությունը, այցելուների թվի անսխալեպ աճը խոսում են այն մասին, որ կենդանաբանական այգին ավելին է, քան սոսկ ժամանցի վայր, և որ շատերը այգու հետ հուզականորեն խոր կապ ունեն: Մի հանգամանք, որ պետք է հաշվի առնել այգու հետագա զարգացումների ընթացքում:

Այցելուների թվի աճը կատարված ծավալուն աշխատանքների պատասխան է, ինչը կենդանաբանական այգին՝ որպես ժամանցի վայր դարձրել է ավելի գրավիչ ոչ միայն երեխաների, այլև մեծահասակների համար:

Երեխաների մասին խոսելիս արժի նշել անցյալ տարվա հունիսի 1-ին այգում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կազմակերպած 4-րդ համահայկական նկարչական մրցույթի «Նկարչական օր» միջոցառումը:

Միջոցառումն իր տեսակով իսկական տոն պարզեց երեխաներին: Միայն այդ օրն այգին հյուրընկալեց շուրջ 30.000 այցելուների, որոնցից կեսից ավելին՝ 18.000-ը՝ երեխաներ, ընդ որում, այդ օրը երեխաների մուտքը այգի անվճար էր:

Ուզում են խոսել նաև «Վիրտուալ տիրույթում» Երևանի կենդանաբանական այգու հաստատվելու մասին: Որպես նոր մոտեցում և գործելակերպի թափանցիկություն, տարբեր միջոցառումներին ու բարեփոխումներին զուգընթաց, 2011-ի մայիսին գործարկվեց www.yerevanzoo.am կայքը, ինչպես նաև «ՎիվաՍԵԼ-ՄՏՍ»-ի աջակցությամբ հուլիսին կենդանաբանական այգում տեղադրվեց Wi-Fi ցանց՝ այցելուներին անվճար ինտերնետի հնարավորություն ընձեռելով:

Մեկ այլ՝ «Կենդանիների խնամակալություն» ծրագրով սկիզբ դրվեց քաղաքացիների և կենդանաբանական այգու միջև նոր դրական հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը:

Ծրագրի շրջանակներում խորհրդանշական գումարով հնարավոր է մեկ տարով կենդանուն խնամակալության տակ վերցնել և անմիջական մասնակցություն ունենալ նրա խնամքին:

Ճիշտ է, նման ծրագրերով եվրոպական կենդանաբանական այգիներում մարդկանց չեն զարմացնի, սակայն Հայաստանում այդ կենդանիների խնամակալությունը բացառիկ երևույթ էր, որն էլ երկի բացատրում էր ծրագրի շուրջ ստեղծված մեծ հետաքրքրությունը:

Խնամակալության առաջին արարողությունը տեղի ունեցավ մայիսի 26-ին, երբ 7-ամյա Լևոն Մխիթարյանը դարձավ ուղտայծերից մեկի խնամակալը: Ներկայումս արդեն այգու 35 կենդանիները խնամակալներ ունեն: Ծրագրի շնորհիվ միայն անցյալ տարվա ընթացքում կենդանիների խնամքի համար հնարավոր եղավ բյուջեն համայնել 2.234.500 դրամով:

Ուրախությամբ պետք է նշել, որ նոր քաղաքականությունը և մոտեցումները իրենց հետ բերեցին նաև նոր գործընկերներ: Գործընկերային կարևորագույն ձեռքբերումներից մեկը Ամստերդամի «Արթիս» թագավորական կենդանաբանական այգու հետ սերտացած հարաբերություններն են:

Միայն 2011-ին Երևանի կենդանաբանական այգուն Ամստերդամի այգու աջակցությունը՝ անասնաբուժական ծառայության, դեղամիջոցների, դասընթացների, սարքավորումների և խորհրդատվության տեսքով, գնահատվում է շուրջ 75.000 եվրո: Նոր գործընկերների շարքում են նաև «ՎիվաՍԵԼ-ՄՏՍ»-ը, «HSBC բանկը» և «Աշտարակ կաթը»:

2011-ի ամռանը մեկնարկեց խոշոր կառավարչիների համար նախատեսված նոր ազատավանդակի շինարարությունը, որի նախագծման և մշակման աշխատանքներում հայ մասնագետներին աջակցեց կենդանաբանական այգիների հայտնի դիզայներ Բեննարդ Հարիսոնը՝ Սինգապուրից:

Սա նշանակում է, որ արդեն այս տարի՝ շինարարական աշխատանքների ավարտից հետո, 2500 քմ տարածք ունեցող ազատավանդակը Երևանի կենդանաբանական այգու խոշոր կառավարչիներին հնարավորություն կտա իրենց ավելի մոտ զգալ բնական միջավայրին:

Շինարարությանն աջակցել է Երևանի քաղաքապետարանը՝ տրամադրելով 50 մլն դրամ: Լրացուցիչ միջոցներ են հավաքվել սեպտեմբերի 15-ին կազմակերպված դրամահավաք ճաշերույթի ընթացքում, որն իր տեսակով առաջինն էր Հայաստանում երբևիցե կազմակերպված միջոցառումների շարքում: Դրամահավաքի ժամանակ հավաքվեց 7.452.750 դրամ:

2012-ի իրականացվելիք առաջնային խնդիրներից մեկը կենդանաբանական այգու նոր գլխավոր հատակագիծը մշակելն ու ավարտելն է:

2011-ի նոյեմբերին միջազգային փորձագետների 10 հոգուց բաղկացած խումբը՝ Ամստերդամի «Արթիս» թագավորական կենդանաբանական այգու տնօրեն Հայկ Բայլանի գլխավորությամբ, ներկայացրեցին գլխավոր հատակագիծն առաջին տարբերակը: Առաջիկա տարիներին գլխավոր հատակագիծը իրագործմամբ հնարավոր կլինի 70-ամյա պատմություն ունեցող Երևանի կենդանաբանական այգին քայլ առ քայլ համապատասխանեցնել կենդանիների խնամքի, կենսաբազմազանության պահպանման և հասարակության կրթության միջազգային չափանիշներին:

Ունենալով բարեփոխումների նոր ծրագրեր և հստակ նպատակներ, արժանանալով բարձր գնահատականի և դրվատանքի խոսքերի, երբեմն էլ՝ քննադատության և չարախոսությունների՝ ես քաջ գիտակցում եմ իմ ստանձնած աշխատանքի կարևորությունը և ընդունում եմ մարտահրավերները՝ Երևանի կենդանաբանական այգին այցելուների համար ուրույն ու հպարտանքի արժանի վայրի վերածելու ուղղությամբ:

Ռուբեն Խաչատրյան, Երևանի կենդանաբանական այգու տնօրեն

